

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԷՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐՂԱՆ ԴԱՎԹՅԱՆԸ

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հարություն Յովհաննիսյանն ու Տաթև համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը մարտի 24-ին հանդիպումներ ունեցան Տաթև համայնքի Խոտ, Հալիծոր, Տաթև, Սվարանց և Տանձատափ բնակավայրերի բնակիչների հետ: Տաթև համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը բնակիչներին ներկայացրեց բնակավայրերում առաջադրված վարչական ներկայացուցիչներին:

Հանդիպումների ընթացքում քննարկել են համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ կապված հարցեր, ծանոթացել՝ առկա խնդիրներին: ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանն անդրադարձավ նաև երիտասարդների ժամանցի կազմակերպման և անհատական ունակությունների զարգացմանն ուղղված խնդիրներին: ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հարություն Յովհաննիսյանը ներկայացրեց համայնքում առաջիկայում իրականացվող ծրագրերը: Մարզային և համայնքային իշխանությունները պատասխանեցին բնակիչներին հուզող հարցերին, լսեցին նրանց առաջարկությունները: Տաթև համայնքում Վարդան Դավթյանն այցելեց նաև նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններ:



